

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ, բնական և հասարակական գիտությունների համակարգ, որն ուսումնասիրում է բնական և արտադրական տերիտորիալ համալիրներն ու դրանց բաղադրամասերը: Ա. սկզբում եղել է Երկրագնդի ու նրա մասերի բնության, բնակչության ու տնտեսության վերաբերյալ գիտելիքների հանրագումար: Հետագայում միասնական Ա. տրոհվել է՝ վերածվելով գիտությունների համակարգի: Ժամանակակից Ա-յան հետազոտության առարկան *աշխարհագրական թաղանթն* է՝ իր բնական և հասարակական տարրերով: Դրանց ուսումնասիրությամբ զբաղվում են երկու խումբ գիտություններ՝ *ֆիզիկական աշխարհագրությունը* և *տնտեսական աշխարհագրությունը*: Ֆիզիկա-աշխարհագրական գիտությունների խումբը բաղկացած է ընդհանուր ֆիզիկական Ա-ից (երկրագիտություն, լանդշաֆտագիտություն, հնէաաշխարհագրություն) և աշխարհագրական թաղանթի առանձին տարրերն ուսումնասիրող գիտություններից (գեոմորֆոլոգիա, կլիմայագիտություն, օվկիանոսագիտություն, ջրաբանություն, հողերի Ա., բույսերի Ա., կենդանիների Ա., սառցադաշտագիտություն, սառցույթագիտություն): Տնտեսա-աշխարհագրական գիտությունների խմբի

մեջ մտնում են տնտեսա-աշխարհագրական երկրագրությունը (համաշխարհային և առանձին երկրների տնտ. Ա.), ճյուղերի Ա., բնական պայմանների և հարըստությունների Ա., արդյունաբերության Ա., գյուղատնտեսության Ա., տրանսպորտի Ա., շինարարության Ա., սպասարկման ճյուղերի Ա., բնակչության Ա.: Աշխարհագրական գիտությունների համակարգում ուրույն տեղ են գրավում երկրագրությունը, քարտեզագրությունը, պատմական Ա. և աշխարհագրության պատմությունը, քաղաքական, բժշկական և ռազմական Ա-ները, հայրենագիտությունը:

Ա-յան սաղմերը ձևավորվել են ստրկատիրական հասարակարգում՝ Փյունիկիայում, Բաբելոնում, Եգիպտոսում, Չինաստանում, Հնդկաստանում, հետագայում՝ Հին Հունաստանում և Հռոմում: Առևտրի և ծովագնացության զարգացումը, ռազմական արշավները հնարավորություն տվին հույներին ու հռոմեացիներին ընդարձակելու իրենց աշխարհագրական մտահորիզոնը: Հին աշխարհի մտածողների ջանքերով, մ. թ. ա. VI—IV դդ. դրվեցին աշխարհագրական գիտության հիմքերը: Թալեսը գրեց իր «Մետեորոլոգիան», Անաքսիմանդրոսը կազմեց հայտնի աշխար-

հի քարտեզը, Ներողոտոսը, ճանապարհորդելով Մերձավոր Արևելքի երկրներում, տվեց նրանց նկարագրությունը: Կատարելագործվեցին մեծ տարածություններում կողմնորոշվելու, աշխարհագրական կետերի դիրքը որոշելու մեթոդները: Երկրի, իբրև օվկիանոսով շրջապատված վահանաձև մարմնի, սկզբնական գաղափարն աստիճանաբար իր տեղը գիջեց գնդաձևության ուսմունքին: Դեմոկրիտն արդեն քննում էր Երկրի ձևի հարցը, երկրաշարժերի, քամիների, Նեղոսի հորդացումների պատճառները: